1. Հայցը բավարարել՝

1.1. Անվավեր ճանաչել ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից 13.01.2026թ. հայտարարված «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ և 6-րդ կետերը:

1.2. ՀՀ ներքին գործերի նախարարությանը պարտավորեցնել «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերությանը:

1.3. Որպես հետևանք անվավեր ճանաչել ՀՀ Ներքին գործերի նախարարության և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև 2026 թվականի մարտի 05-ին կնքված «ՀՀ Ներքին գործերի նախարարության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» պայմանագիրը:

2. Պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարարությունից հօգուտ հայցվոր «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերության բռնագանձել 5,914,800 (հինգ միլիոն ինը հարյուր տասնչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար: Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ Պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEFB-D1C4-45AF-9B23 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am